

ԿՈՒՐԱ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության պայմանագիրը ստորագրվել է 2002թ. օգոստոսի 21-ին, Երևանում: Համագործակցության պայմանագիրը ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և Կուբայի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- առողջապահական և բժշկական կազմակերպությունների և այլ հիմնարկների միջև համագործակցության զարգացում
- կողմերի փոխադարձ համաձայնությամբ տարեկան աշխատանքային պլանի պատրաստում
- փորձագետների պատվիրակությունների գործուղումներ՝ երկու երկրների առողջապահության և գիտահետազոտական աշխատանքների զարգացման նպատակով
- բժշկագիտական միությունների կողմից գիտաժողովների ժամանակացույցը և կոնֆերանսների կազմակերպման մանրամասների ներկայացում (մինչև ամեն տարվա դեկտեմբերի 15-ը)
- ինստիտուտների և հիվանդանոցների միջև երկկողմանի համագործակցություն: ինստիտուտների ղեկավարների կողմից ստորագրված պլանները կգործեն տվյալ երկրի իրավասու մարմինների կողմից հաստատվելուց հետո՝ իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան
- ուսուցողական նյութերի, բժշկական գրականության, առողջապահության ոլորտի որենսդրության երկկողմանի քարոզչություն, նաև առողջապահական վիճակագրական տվյալների և համաճարակաբանական հաշվետվությունների վարակիչ հիվանդությունների երկկողմանի փոխանակում
- անհետաձգելի անվճար բուժօգնություն իր երկրի տարածքում գտնվող մյուս երկրի քաղաքացուն, ներառյալ՝ ատամնաբուժական, բացառությամբ այն քաղաքացիների, որոնք գտնվում են այլ երկրում վճարովի բուժօգնություն ստանալու նպատակով
- 3 հոգուց բաղկացած համակարգող խմբերի ստեղծում՝ հանդիպումների գործնական իրագործման նպատակով փոփոխությունների առանձին արձանագրություններով ձևակերպում